

# Հայոց ցեղասպանության արյունոտ դրամի արահետը՝ հնարավոր է պատմության մեջ մեծագույն պետական գողությունը - իսկապես ցնցող է:

1915թ.-ի ապրիլի 24-ին Կ. Պոլսում (Ստամբուլ) օսմանյան թուրքերը ձերբակալում են և ավելի ուշ սպանում ավելի քան 250 հայ առաջնորդների:

1915թ.-ի մայիսի 16-ին ընդունվում է ցեղասպանության գոհերի «լքված» հայկական ունեցվածքի բռնագրավումը (հափշտակումը) թույլ տվող օսմանյան օրենքը:

1915թ. հուլիսի 24, Օսմանյան քաղաքականություն՝ գողացված հայկական գումարի կեսը հատկացվում է կառավարության Կենտրոնական կոմիտեին, իսկ մյուս կեսը հատկացվում է հայերին՝ սպանողներին՝ հիմնականում չեթթի կոչվող հանցագործներին, ովքեր ազատ էին արձակվել բանտերից և զինվել կառավարության կողմից:



1. Արևմտյան Հայաստան՝ թուրքերի և քրդերի կողմից սպանված 1.5 մլն անգեն հայերից հափշտակվում են վեց միլիոն թուրքական ոսկե ֆունտ, գումարած ֆիզիկական գույք (20,545 շենք, 2,549 հոգևոր կայք և 1,082 կմ2 տարածք), կանխիկ գումար, բանկային ավանդներ և զարդեր:
2. Կ. Պոլիս՝ 1915-1916թթ. ընթացքում հայերից գողացված ամբողջ գումարը հրամանագրով փոխանցվում է պետական գանձապետարանին Կ. Պոլսում:
3. Բեռլին՝ 1916թ.-ին մուրհակների տրամադրման դիմաց հայկական ակտիվների հինգ միլիոն թուրքական ոսկե ֆունտն ուղղվում է դեպի Ռեյխսբանկ (2006թ.-ին դատական հայց է հարուցվում Deutsche և Dresdner բանկերի դեմ՝ հաստատելով շահարկումը վայրագություններից): 1918թ. հոկտեմբերի 29-ին Նազիմ բեյը փախուստի դիմելով Գերմանիա՝ իր հետ տանում է 65,000 թուրքական ոսկե ֆունտ և 600,000 թուրքական ոսկե ֆունտ արժողությամբ զարդեր:
4. Լոնդոն/Փարիզ՝ 1919թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսի ընթացքում հայկական պատվիրակությունը միայն հայկական եկեղեցու կողմից կորուստները գնահատում է ԱՄՆ 3.7 մլրդ դոլար (այսօր՝ ԱՄՆ 50 մլրդ դոլար և ավել, համեմատած նացիստական բանկի ԱՄՆ 5,6 միլիարդ դոլարի չափով գողության հետ): Փոխարեն վերադարձնելու հայկական հարստությունը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան JP Morgan բանկի միջոցով Փարիզում վաճառում են այն գանձապետական հավաստագրերի դիմաց Նյու Յորք, Միացյալ Նահանգներ:
5. Նյու Յորք՝ 1918թ.-ին Թուրքիայի կառավարությունը փորձում է գումար ստանալ իր կողմից սպանված հայերի 2,400 Նյույորքյան կյանքի ապահովագրերի դիմաց՝ պնդելով, որ ապահովագրությունը կրողների ոչ մի ժառանգորդ չկա, սակայն հաջողության չի հասնում:
6. Ինջիրլիք՝ Միացյալ Նահանգները միլիարդներ է ծախսում օժանդակելու ԱՄՆ Օդային ուժերի բազան Թուրքիայի հարավ-արևելքում, որտեղ մուսք գործելուն սպառնում է Թուրքիան, եթե ԱՄՆ-ը ճանաչի Հայոց ցեղասպանությունը (<http://www.theguardian.com/world/2010/mar/05/turkey-us-vote-armenian-genocide>).